**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 1997թ. **N**10

քաղ. Երևան

## Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 1-ի թիվ 6 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 1-ի թիվ 6 որոշման առաջին կետի թ) ենթակետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բնակչության յուրաքանչյուր բաժանորդի ամսական 250 կՎտժ-ից ավելի սպառած և 6(10) ու 0.4 կՎ լարման այլ սպառողների յուրաքանչյուր կՎտժ էլեկտրաէներգիայի համար 25 դրամ/կՎտժ սակագին, ներառյալ ԱԱՀ»,

ավելացնելով հետևյալ պարբերությունները.

«Ուղիղ բջիջներով սնվող սպառողներից և բնակչությունից բացի բոլոր սպառողներին, անկախ լարումից, դասել այլ սպառողների խմբին»,

«Ընդունել, որ բարձր լարման այլ սպառողներին սնող էլեկտրահաղորդման գծերի և տրանսֆորմատորների էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստները հաշվի են առնված այլ սպառողներին էլեկտրաէներգիայի վաճառքի սակագնում»:

**ՀՀ էներգետիկայի**
**հանձնաժողովի նախագահ** **Վ. Մովսեսյան**